



**Բովանդակություն**

Կոտայքի մարզի տնտեսական և ժողովրդագրական նկարագիրը . . . . . 2

Արդյունաբերություն . . . . . 2

Ֆինանսական բնագավառ . . . . . 2

Տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգում . . . 3

Կրթություն . . . . . 6

Մշակույթ և սպորտ . . . . . 7

Սոցիալական ապահովություն . . . . . 8

Առողջապահություն . . . . . 8

Երեխաների իրավունքների պաշտպանություն . . . . . 9

Հողաշինություն և հողօգտագործում . . . . . 10

Գյուղատնտեսություն . . . . . 11

Բնապահպանություն . . . . . 13

Քաղաքաշինություն . . . . . 14

Ջրային տնտեսություն և ենթակառուցվածքներ . . . . . 15

Տրանսպորտ, ճանապարհաշինություն և կապ . . . . . 16

Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր . . . . . 18

Քաղաքացիների ընդունելություն, փաստաթղթաշրջանառություն, կադրային աշխատանք . . . . . 18

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Կոտայքի մարզն ունի 67 համայնք, այդ թվում՝ 7 քաղաքային:

Հաշվետու տարում հանրապետությունում իրականացված վարչատարածքային փոփոխությունների հետևանքով Կոտայքի մարզի փաստացի տարածքը նվազեց 13 քառ. կմ-ով և կազմեց 2076 քառ. կմ:

Մարզի բնակչությունը կազմում է 280700 մարդ, որից 56.1% քաղաքային, 43.9 % գյուղական: Նախորդ տարվա համեմատ բնակչության թիվն ավելացել է մոտ 1900 մարդով՝ հիմնականում բնական աճի հաշվին:

2009 թվականի ընթացքում մարզում ծնվել է 3981 մարդ կամ նախորդ տարվա համեմատ 342-ով ավել, իսկ մահացածների թիվը պակասել է 20-ով և կազմել 2184 մարդ:

Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 66-ով և կազմել 1683, իսկ ամուսնալուծությունների թիվն ավելացել է 8-ով՝ հասնելով 202-ի:

Հաշվետու տարում մարզպետարանը, համագործակցելով հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, համայնքների ղեկավարների, մարզում գործող հիմնարկ-ձեռնարկությունների հետ, տնտեսության տարբեր ոլորտներում իր գործառույթներն իրականացրել է ՀՀ Նախագահի՝ «Մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրի դրույթներին համապատասխան:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

Ըստ նախնական վիճակագրական տվյալների 2009թ. մարզում գործող արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ծավալը գործող գներով կազմել է 80.4 մլրդ. դրամ, որը կազմում է նախորդ տարվա արտադրանքի մոտ 89.2 %-ը: Արտադրանքի ծավալի մեջ շուրջ 30.0 մլրդ-ը կազմում է էլեկտրաէներգիայի արտադրությունը, որը նախորդ տարվա արտադրանքի 95.0 %-ն է:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը նախնական տվյալներով կազմել է 80.1 մլրդ. դրամ, որը կազմում է նախորդ տարվա իրացման ծավալների 87.6 %-ը: Նվազումը պայմանավորված է արտադրության ծավալների կրճատմամբ:

Մենդի արտադրության ծավալները կազմել են շուրջ 25.0 մլրդ. դրամ՝ կամ նախորդ տարվանից 0.6 մլրդ. դրամ պակաս: Աճ է նկատվել նաև դեղագործական արտադրության բնագավառում շուրջ 10 տոկոսի չափով:

*մլն. դրամ*

	2008	2009	շեղում +/-	%
Արդյունաբերական արտադրանք	90100.0	80400.0	-97000.0	89.2
իրացում	91400.0	80100.0	-11300.0	87.6
էլ. էներգիա	31500.0	29900.0	-1600.0	94.9
արտահանում	11000.0	9800.0	-1200.0	89.0
սննդի արդյունաբեր.	25000.0	24400.0	-600.0	97.6

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ**

2009 թվականի ընթացքում սահմանված կարգով, ժամանակին և ամբողջական ծավալներով իրականացվել է պետական բյուջեից մարզային ենթակայության կազմակերպություններին նախատեսված ծախսերի ֆինանսավորումը, բացառությամբ մարզային ավտոճանապարհների պահպանման շահագործման ծրագրով նախատեսված ծախսերից, որից 13.3 մլն. դրամ չի իրացվել՝ կապալառուների կողմից աշխատանքները լիարժեք չիրականացնելու պատճառով:

Տարեցտարի պետական բյուջեից համայնքներին տրվող դոտացիաներն ավելանում են շուրջ 200-250 մլն դրամով՝ 2009-ին հասնելով 2 մլրդ 354 մլն դրամի: Հավելենք նաև, որ ՀՀ Կառավարության կողմից մարզի Չորաղբյուր, Արզնի, Կապուտան, Նոր Հաճրն և Գողթ համայնքներին հատկացվել է շուրջ 100 մլն դրամի սուբվենցիա:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը ստիպեց լինել ավելի հաշվենկատ, ճշգրիտ հաշվարկել հնարավորություններն ու կարողությունները և պատահական չէ, որ վերջապես 2009 թվականին,

առաջին անգամ, մեզ հաջողվեց ապահովել համայնքների բյուջեների կայուն հավաքագրում. նախատեսված 1 մլրդ. 739 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է շուրջ 1 մլրդ. 790 մլն. դրամ՝ կատարողականը հասցնելով 103 %-ի, մայիս ամսից սկսած կատարելով աշխատավարձի ընթացիկ վճարումներ:

Այդուհանդերձ ոչ բոլոր համայնքներն են ապահովել սեփական եկամուտների հավաքագրման 100 տոկոս արդյունք, իսկ թվով 12 գյուղական համայնքներ չեն ապահովել նույնիսկ 90 տոկոսի հավաքագրում: Որոշ համայնքներում /Սոլակ, Պտղնի, Ջորավան, Նոր Արտամետ/ սեփական եկամուտների հավաքագրման առաջադրանքի թերակատարումը պայմանավորված է համայնքային բյուջեների առանձին եկամտատեսակների սխալ պլանավորմամբ:

Համայնքների ղեկավարների նպատակաուղղված աշխատանքի արդյունքով նախորդ տարվա համեմատ զգալի բարձրացել է համայնքների հողի և գույքահարկի հավաքագրման մակարդակը՝ ինչպես տոկոսային արտահայտությամբ, այնպես էլ բացարձակ թվով՝ համապատասխանաբար 120.0 մլն և 181.0 մլն դրամով:

Գույքահարկի բազաների տեղափոխումը համայնքներ իր դրական ազդեցությունն է ունեցել ապառքների գանձման գործում՝ 2009թ. ընթացքում գանձվել և համայնքային բյուջեներ է մուտքագրվել շուրջ 165.0 մլն. դրամ:

Հիմնականում «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում հաշվետու տարում գանձվել է շուրջ 98.0 մլն. դրամ հողի հարկի ապառք:

Հողի և գույքի վարձակալական վճարների գանձման ուղղությամբ թերացել են Կարենիս, Ջառ, Հատիս, Նորգյուղ, Արագյուղ և Գետամեջ համայնքները, իսկ տեղական տուրքերի գանձման ուղղությամբ՝ Մարմարիկ, Ակունք, Նորգյուղ և Սևաբերդ համայնքները:

Չնայած բյուջեների կատարման բավականին բարձր ցուցանիշներին՝ գրեթե բոլոր համայնքներում առկա են ռեսուրսներ բյուջեները համալրելու համար՝ հողերի վարձակալական վճարներ, տեղական տուրքեր՝ այդ թվում գիշերային ժամերի աշխատանք, գովազդներ, առևտրի և սպասարկման բազմաթիվ խախտումներից առաջացող միջոցներ:

2009 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսվել և պետական ոչ առևտրային 31 կազմակերպություններում ու մարզպետարանի աշխատակազմում իրականացվել է աուդիտ: Արդյունքները քննարկվել են պատասխանատուների մասնակցությամբ և արձանագրված թերությունների, բացթողումների համար թվով 5 դպրոցների տնօրենների ու 12 գլխավոր հաշվապահների նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր: Դպրոցների հաշվարկային հաշիվներին է վերականգնվել ավել վճարված 859.5 հազար դրամ, իսկ պետական բյուջե՝ 265.1 հազար դրամ: Աշակերտների փաստացի թվաքանակի ավել արտացոլելու հետևանքով դպրոցների 2009 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցվել է 3874.0 հազ դրամ:

Սահմանված կարգի համաձայն մարզպետարանի ենթակայության բոլոր առողջապահական ընկերություններում վճարովի հիմունքներով աշխատում են 9 վերստուգողներ. նրանց կողմից իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել են նախահաշվից ավել կատարված, փաստաթղթերով չհիմնավորված և այլ բնույթի ծախսերի զգալի խախտումներ, որից շուրջ 8 մլն. դրամը վերականգնվել է:

Թույլ տրված խախտումների և թերությունների համար աշխատանքից ազատվել են Աբովյանի ծննդատան տնօրենը և գլխավոր հաշվապահը, իսկ Նաիրի բժշկական կենտրոնի տնօրենը, Աբովյանի բժշկական կենտրոնի, Նոր Երզնկայի և Նոր Գեղիի ԱԱՊԿ-ների գլխավոր հաշվապահները ենթարկվել են կարգապահական տույժի:

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հաշվետու տարում համայնքի ղեկավարի ընտրություններ են անցկացվել Նոր Հաճրն և Նուռնուս համայնքներում:

Մարզխորհրդի նիստերում և խորհրդակցություններում, որոնց հրավիրվել են նաև հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ և շահագրգիռ այլ կազմակերպությունների աշխատակիցներ, հիմնականում քննարկվել են համայնքների ղեկավարների պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման, համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման, մարզի սոցիալ-տնտեսական ոլորտներին վերաբերվող բազմաբնույթ այլ հարցեր:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել են մարզպետի թվով 38 այցելություններ մարզի համայնքներ, ուսումնական և առողջապահական կազմակերպություններ, որտեղ և անցկացվել են համատեղ խորհրդակցություններ ու քննարկումներ, որոնց արդյունքում լուծվել են մի շարք համայնքային խնդիրներ և Կառավարության կողմից իրականացվող տարածքային քաղաքականության հարցեր:

Մարզպետարանի ակտիվ աջակցությամբ ներդրվեց համայնքային ծառայության համակարգը: ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով հաստատվել է համայնքային ծառայության 573 պաշտոն, որից տարեվերջի դրությամբ զբաղեցված է 531-ը: Թափուր է 42 հաստիք, որից 12-ը՝ աշխատակազմերի քարտուղարների:

2009 թվականին վերապատրաստվել են 354 համայնքային ծառայողներ, ատեստավորվել են բոլորը:

Այս ամենով հանդերձ դեռևս որոշ համայնքների ղեկավարներ շարունակում են աշխատակազմերում նախատեսել չհիմնավորած հաստիքներ՝ բազմաթիվ տեղակալներ, խորհրդականներ և օգնականներ:

2009թ. աշխատանքային ծրագրի համաձայն մարզի 21 համայնքներում իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն, որի արդյունքում արձանագրվել են գրեթե բոլոր համայնքներին բնորոշ այնպիսի խախտումներ ու թերություններ, ինչպես օրինակ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների, ավագանու որոշումների մարզպետարան առաքելու համար սահմանված ժամկետների, բյուջեների կատարման եռամսյակային հաղորդումները և տարեկան հաշվետվությունները ավագանուն ներկայացնելու համար սահմանված ժամկետների խախտումներ և տարբեր բնույթի թերություններ ու բացթողումներ, որոնց մանրամասն վերլուծությունները գրավոր իրազեկվել են համայնքների ղեկավարներին: Եվ կարելի է փաստել, որ շատ համայնքներում զգալի դրական տեղաշարժեր կան և նախկին ստուգումներով արձանագրված բազմաթիվ խախտումներ ու թերություններ գրեթե կարգավորվել են:

Համայնքների ղեկավարների կողմից դեռևս լիարժեք չի վերահսկվում առևտրի օբյեկտներում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի օրենքով սահմանված պահանջները, վաճառքը կատարվում է բազմաթիվ խախտումներով և թերություններով:

Մարզի 67 համայնքներից գազաֆիկացված են 61-ը: Գազաֆիկացված չեն՝ Հանքավան, Ջովաշեն, Սևաբերդ, Ողջաբերդ, Սարալանջ, Բուժական համայնքները, որի հիմնական պատճառը գազամատակարարման ցանցերի հեռավորությունն է և իրականացվելիք ներդրումների՝ տնտեսապես արդյունավետ չլինելու հանգամանքը:

Բաժանորդների թիվը 1991 թվականի համեմատ ավելացել է շուրջ 7200-ով, հասնելով 57100-ի:

**ԱՅԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

անվանում	ֆինանս. աղբյուր	համայնքներ	ծավալներ մլն/դր
<b>գազամատ. սիստեմա</b>	պետ.բյուջե	Նոր Հաճրն	25.0
	IFAD	Մեղրածոր	33.0
	համայնք	Արտավազ	42.0
	IFAD	Եղվարդ	55.0
	IFAD	Պռոշյան	46.0
<b>Ընդամենը</b>			<b>201.0</b>
<b>Համայնքային կենտրոն</b>	համայնք	Արտավազ	57.0
<b>Մանկապարտեզ</b>	համայնք	Չորաղբյուր	104.5
	պետ. բյուջե	Արզնի	25.0
	բարեգործ.	Պռոշյան	40.0
	միջոցներ	Չարենցավան	50.0
<b>Համայնքային ճանապարհներ</b>	համայնք	Չորաղբյուր	110.0

Մարզի տարածքում էլեկտրաէներգիայի մատակարարումն իրականացվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաճյուղի 5 էլեկտրական ցանցերի միջոցով: Հարկ են համարում նշել, որ այս բնագավառում կան բազմաթիվ չլուծված խնդիրներ և ներդրումների ոչ բավարար քանակություն. օրինակները բազմաթիվ են՝ հատկապես դեպի Կապուտան, Հատիս և Ջովաշեն համայնքներ տանող էլեկտրասնուցման գծերը ծայրահեղ անմխիթար վիճակում են և մատակարարման խափանումները կրում են պարբերական բնույթ: Այդ մասին մի քանի անգամ գրավոր տեղեկացվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությանը:

Ավելացնեն նաև, որ Կոտայքի մարզպետարանի ու «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության «Գեղամա» մասնաճյուղի կողմից համատեղ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2009 թվականի օգոստոս ամսվա ընթացքում ուսումնասիրվել է մարզի էներգահամակարգի անվտանգության գոտիներում առկա իրավիճակը և հայտնաբերվել է թվով 963 ապօրինություն, որից 745-ը ունեին կամ ժամանակի ընթացքում ձեռք էին բերել համապատասխան իրավական փաստաթղթեր:

Հանձնաժողովը շարունակել էր իր աշխատանքերը, կատարվել է ապօրինի օբյեկտների բաժանում ըստ կարգավիճակի, ելնելով դրանց վերացման անհրաժեշտությունից, կարևորությունից և կատարող կազմակերպությունից:

Արժյանում վերացվել է 12, Քասախում՝ 4, Ջովունիում՝ 2, Թեղենիքում՝ 1 Ալափարսում՝ 4, Ծաղկածորի ուղղության վրա՝ 20 ապօրինություն, Չարենցավանում տեղափոխվել է միջնակապի 10 կվ մալուխը:

Խիստ հսկողություն է սահմանվել հետագայում խախտումներ թույլ չտալու ուղղությամբ:

Չորահավաքային և գորակոչային գործընթացներն իրականացնելու ընթացքում մարզպետարանի, մարզային դատախազության, ոստիկանության, զինվորական կոմիսարիատների համագործակցված աշխատանքների արդյունքներով իրականացվել և ապահովվել են 2009թ. գորակոչերի և Չորահավաքների պլան-առաջադրանքների կատարումը: Չորակոչերից խուսափողների ցուցակները սահմանված կարգով ներկայացվել են դատախազություն, վերջինիս կողմից հարուցվել է քրեական 81 գործ: Արդյունքում 2009թ. ընթացքում հայտնաբերվել և գորակոչվել են 14 գորակոչիկներ:

Հարկ է նշել, որ դեռևս բավարար չեն նախագորակոչիկների հաշվառման /կցագրման/ ուղղությամբ մարզի զինվորական կոմիսարիատների կողմից իրականացվող աշխատանքները: 2009 թվականի կցագրման ենթակա 2440 նախագորակոչիկներից կցագրվել են 2021-ը: Չկցագրվածների թիվը ըստ զինվորական կոմիսարիատների այսպիսին է՝ Կոտայք – 180, Հրազդան – 91, Նաիրի – 78, Չարենցավան – 70:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն կցագրման գործընթացի հարցում պատասխանատվության և պարտականությունների իրենց բաժինն ունեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկ-ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձինք:

Մարզպետարանը մշտապես հետամուտ է լինելու կցագրման գործընթացի արդյունավետության ապահովմանը:

Համաձայն մարզային փրկարարական վարչության 2009 թվականի աշխատանքային ծրագրի և բնակչության պաշտպանության համակարգի հիմնական միջոցառումների պլանի անցկացվել է 26 շտաբային ուսումնավարժանք:

2009թ. ընթացքում մարզի տարածքում արձանագրվել է 962 հանցագործության դեպք, որոնցից բացահայտվել է 712-ը կամ 81.9 %, նախորդ տարվա համեմատ բացահայտումը աճել է 6,8 %-ով: Արձանագրված 608 քրեական հանցագործություններից բացահայտվել է 410-ը կամ 74,3%-ը, նախորդ տարվա համեմատ բացահայտումը նվազել է 1,9 %-ով:

Ռոշակի առաջընթաց կա անվտանգ երթևեկության կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքների առումով: Հաշվետու տարում մարզի տարածքում արձանագրվել է 171 ճանապարհատրանսպորտային պատահար, որը նախորդ տարվանից պակաս է 30-ով:

Մահացու ելքով պատահարների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 18-ով և կազմել է 47 դեպք:

Կրկնակի անգամ աճել են հայտնաբերված և արձանագրված ճանապարհային երթևեկության վարչական իրավախախտումների, այդ թվում ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցները վարելու երևույթները: Արձանագրված վարչական խախտումների արդյունքում գանձվել է 257 մլն. դրամ և դատարան է ուղարկվել 7260 գործ, մոտ 163.7 մլն. դրամ ընդհանուր գումարով:

Մարզում գործում են մարզպետարանի ենթակայության 104 կրթական հաստատություններ, որոնցից 96-ը՝ միջնակարգ հանրակրթական, 5-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ (օժանդակ) դպրոցներ:

Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներում այս ուսումնական տարում կոմպլեկտավորվել է 1627 դասարան՝ 33967 աշակերտներով: Միջին խտությունը կազմել է 20.8 աշակերտ՝ պլանավորված 21.8-ի դիմաց:

2008-2009 ուսումնական տարում դպրոցն ավարտած 3560 շրջանավարտներից միասնական քննություններ են հանձնել 36%-ը, որոնց շուրջ 80 %-ը ընդունվել են ԲՈՒՀ-եր, նախորդ տարի այդ ցուցանիշը կազմել է 70%:

Մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 3400 ուսուցիչներ, որոնց ավելի քան 86%-ն ունի բարձրագույն մանկավարժական, 12%-ը՝ միջին մասնագիտական, իսկ մնացածը՝ բարձրագույն կամ միջին ոչ մասնագիտական կրթություն:

Մանկավարժական կադրերի թափուր աշխատատեղերը համալրվում են մրցութային կարգով:

Մարզի լեռնային, բարձր լեռնային և հեռավոր բնակավայրերի դպրոցները մասնագետ կադրերով համալրելու գործընթացը շարունակվել է նաև այս ուսումնական տարվա ընթացքում: Նպատակային գործուղումով բարձրագույն կրթություն ստացած 4 ուսուցիչներ արդեն աշխատանքի են անցել նման կարգավիճակով դպրոցներում: Կրթության և գիտության նախարարության ուղեգրերով աշխատում են 60 մանկավարժներ: Շուրջ 25 ուսուցիչներ ստանում են լրացուցիչ մասնագիտական կամ շարունակական բարձրագույն մանկավարժական կրթություն:

Հաշվետու տարում, մինչև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ընդունվելը, գործադիր տնօրենի թափուր պաշտոնի մրցույթներ են տեղի ունեցել թվով 11 դպրոցներում: Մրցույթի արդյունքում ընտրված տնօրենների հետ սահմանված կարգով կնքվել են աշխատանքային պայմանագրեր:

Դպրոցը ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ դառնալու համար չափազանց կարևոր է կառավարման խորհուրդների արդյունավետ գործունեությունը, որը դեռևս հեռու է բավարար լինելուց: Ներկայումս 7 հանրակրթական հաստատություններում գործադիր տնօրենի պաշտոնը թափուր է և ժամանակավոր պաշտոնակատարներ են նշանակվել նախկին տնօրենները: Հարկավոր է, որ Կրթության և գիտության նախարարության կողմից հնարավորինս սեղմ ժամկետում մշակվի գործադիր տնօրենների ընտրության և նշանակման նոր կարգը: Ի դեպ հարկ են համարում նշել, որ Պռոշյանի միջնակարգ դպրոցում համապատասխան կարգի խախտմամբ, որի կապակցությամբ առկա է նաև Կրթության և գիտության նախարարության հանձնաժողովի եզրակացությունը, տեղի է ունեցել գործադիր տնօրենի ընտրություն և արդյունքում չի կնքվել աշխատանքային պայմանագիր:

2009թ. սեպտեմբերի 1-ից՝ որպես ավագ դպրոցներ, գործում են Հրազդանի N1, N10, N13, Գառնիի N2 և Եղվարդի N1 դպրոցները: 2010-2011 ուստարում ավագ դպրոցներ են կազմավորվելու նաև Չարենցավան, Աբովյան, Բյուրեղավան, Նոր Հաճրն քաղաքներում:

Մարզից վերապատրաստվել են 604 մանկավարժներ /այդ թվում ավագ դպրոցներում աշխատող 130 ուսուցիչներ/ և համակարգչային 64 օպերատորներ:

Մարզի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունները, կրթակարգի պահանջներին համապատասխան, ապահովված են համակարգիչներով, իսկ ինտերնետ կապով՝ 91-ը, բացառությամբ այն դպրոցների, որոնց համայնքներում չկա ինտերնետային կապ:

Համակարգում դեռևս կան լուծում պահանջող զգալի հիմնախնդիրներ կապված դպրոցական շենքերի կառուցման և հիմնանորոգման, ինչպես նաև դրանց կահավորման և գույքի ձեռքբերման ուղղությամբ, որոնք արդեն իսկ ընդգրկվել են մարզի զարգացման 2011-2014 թթ. ծրագրի նախագծում: Հաշվի առնելով «Հանրակրթության մասին» օրենքի ընդունումը՝ խիստ անհրաժեշտ է դառնում դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունումը՝ կրթության համակարգի առավել արդյունավետ կառավարումն ապահովելու համար:

Ասվածին պետք է հավելեմ նաև, որ հանրակրթության գլխավոր հաջողությունը մանկավարժական կադրերի ունակությունների և հմտությունների շարունակական կատարելագործումն է, որին պետք է հետևողականորեն հասնել վերապատրաստումների և ատեստավորման գործընթացի միջոցով:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ			ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ		
2008-2009 ուստարի	2009-2010 ուստարի	տարբե րությունը	2008-2009 ուստարի	2009-2010 ուստարի	տարբե րությունը
35637	33967	-1670	1667	1627	-40

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԹԻՎԸ			ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ		
2008-2009 ուստարի	2009-2010 ուստարի	տարբե րությունը	2008-2009 ուստարի	2009-2010 ուստարի	տարբե րությունը
3069	3359	+290	21.4	20.9	-0.5

ՈՒՍՈՒՑԻՉ - ԱՇԱԿԵՐՏ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆ	ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԻՎԸ	ԹՈՇԱԿԱՌՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
1:10	3400	68 /որից 37-ը 65-ից բարձր/

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԲԵՌՆՎ. ԴԱՍԱԺԱՄ.			ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆԴ. ԲԵՌՆՎ.		
2008-2009 ուստարի	2009-2010 ուստարի	տարբե րությունը	2008-2009 ուստարի	2009-2010 ուստարի	տարբե րությունը
18.4	18.2	-0.2	21.6	21.3	-03

**ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ**

Հաշվետու տարում մարզում գործել են 9 երաժշտական, 16 արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 72 գրադարաններ, 62 մշակույթի տներ և ակումբներ, 6 թանգարաններ, 2 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 1 պատկերասրահ, 1 թատրոն, 2 երաժշտական և 1 գեղարվեստի ստուդիաներ:

Մարզի տարածքում գործում են 15 մանկապատանեկան մարզադպրոցներ, որտեղ մարզվում են 3650 պատանիներ և աղջիկներ: Առավելապես լայն տարածում ունեն սամբո, ձյուդո, ազատ ոճի ըմբշամարտ, բազկամարտ, բռնցքամարտ, շախմատ, թեթև ատլետիկա, ֆուտբոլ, մականախաղ և դահուկային սպորտաձևերը: Մեր մարզիկները մասնակցել են Աշխարհի, Եվրոպայի, Հայաստանի Հանրապետության առաջնություններին՝ նվաճելով մեդալներ և այլ մրցանակներ:

Մարզն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել հանրապետական մի շարք մշակութային և մարզական փառատոններում ու մրցույթներում՝ արձանագրելով զգալի հաջողություններ և ձեռքբերումներ:

Բազմաթիվ պատմամշակութային հուշարձանների, եկեղեցիների, դամբարանադաշտերի, խաչքարերի առկայությունը, ինչպես նաև Ծաղկաձորի, Հանքավանի և Աղվերանի հանգստյան գոտիները լուրջ խթան են հանդիսանում զբոսաշրջության զարգացման համար:

Մարզպետարանը մշակել է մարզային զբոսաշրջային երթուղիներ /Գառնի, Գեղարդ, Բջնի, Կեչառիս, Թեղենյաց վանական համալիր/ մարզի պատմամշակութային հուշարձանները, բնաշխարհը, ազգային ծեսերը և տոնակատարությունները ավելի ճանաչելի դարձնելու նպատակով:



**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ**

	2009թ.	2008թ.	դինամիկան
• Նպաստառու ընտանիքներ -	9164	9344	- 180
• Կենսաթոշակատուներ -	40174	38650	+ 1524
• Գործազուրկներ -	7964	6516	+ 1448
• Փախստականներ -	11800	11800	

Ընտանեկան նպաստների հասցեականության բարձրացման նպատակով կատարված կրկնակի տնային այցելությունների և հարակից բազաների համադրումների շնորհիվ նախորդ տարվա համեմատ մարզի նպաստառու ընտանիքների թիվը նվազել է 180-ով կազմելով՝ 9164: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում սխալ նշանակված նպաստները դադարեցվել են և կատարվել է ետգանձում 5.2 մլն. դրամ գումարով :

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սխալ նշանակված նպաստները հիմնականում պայմանավորված են համայնքների ղեկավարների կողմից տրված տեղեկանքների ոչ հավաստի տվյալներով:

Ներկայումս ՀՀ տարածքային կառավարման նախարարության նախաձեռնությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ և քննարկումներ են ընթանում նպաստի նշանակման կարգի մեջ փոփոխություններ կատարելու ուղղությամբ՝ մասնավորապես տեղեկանքների տրամադրման կարգի, նրանցում ներառված տվյալների և հարակից բազաների ժամկետների հետ կապված: Նշված փոփոխությունները կբարձրացնեն ընտանեկան նպաստների հասցեականությունը և կնվազեցնեն կոռուպցիոն երևույթները:

Սոցիալական աջակցության խորհուրդների առաջարկությամբ հրատապ դրամական օգնություն է տրամադրվել 4926 ընտանիքի, որոնց կարիքավորության միավորը 30.00-ից ցածր է եղել և նախորդ տարվա համեմատ ավել է վճարվել 912 ընտանիքի:

2009 թվականի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող ծրագրով բնակարանի կամ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) 56 անապահով ընտանիքների բնակարան ձեռք բերելու համար հատկացվել է 285.8 մլն դրամ գումար: Դեռևս մարզում հաշվառված են բնակարանի կարիք ունեցող 54 և բնակարանի բարելավման կարիք ունեցող 223 զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներ, որոնցից 20-ը հաշվառվել են հաշվետու տարվա ընթացքում:

Հավելեմ նաև, որ դեռևս բնակարանի կարիք ունեն ժամանակավոր կացարաններում բնակվող 326 փախստական ընտանիք:

Մարզի զոհված ազատամարտիկների և կարիքավոր ընտանիքների 150 երեխաներ, որից 20-ը ԼՂՀ-ի Շահումյանի շրջանից, երկու հերթափոխով իրենց ամառային հանգիստը անցկացրել են «Հեքիաթների կիրճ» մանկապատանեկան ճամբարում:

Հաշվետու տարում զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է 7964 գործազուրկ, որից 5541-ը կանայք: Նախորդ տարվա համեմատ զբաղվածության կենտրոններում գրանցվել են 1448-ով ավելի գործազուրկներ, պատճառը գործազրկության նպաստի ավելացումն է և մարզի մի շարք ձեռնարկություններում աշխատատեղերի կրճատումները:

«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի իրականացման համար մարզին տրամադրվել է 48 մլն.դրամ, որից իրացվել է 42.3 մլն.-ը: Իրականացվել է 25 ծրագիր՝ ժամանակավոր աշխատատեղերով ապահովվել է 284 մարդ:

**Ծրագրերն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է օժանդակ աշխատանքների համար սահմանել աշխատանքային նորմատիվներ:**

**ՍՈՌՉԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

Մարզի առողջապահական համակարգում գործում են 100 % պետական բաժնեմասով 36 ընկերություն, որոնցից՝ 4 բժշկական կենտրոն, 2 ծննդատուն, 1 քաղաքային պոլիկլինիկա, 2 առողջության կենտրոն, 6 բժշկական ամբուլատորիա, 20 առողջության առաջնային պահպանման կենտրոն և մեկ մարզային արյան բանկ, իսկ համայնքային ենթակայության 5 առողջապահական ընկերություններ:

Մարզի բնակչությանը հաշվետու տարվա ընթացքում բուժ.հաստատությունների կողմից մատուցվել է մոտ 2 մլրդ 63 մլն դրամի պետության կողմից երաշխավորված բժշկական



օգնություն և սպասարկում, իսկ վճարովի ծառայություններից գոյացած գումարը կազմել է 172.0 մլն. դրամ:

Մարզի բուժ. հիմնարկներից կրեդիտորական պարտքեր ունի միայն «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն. և եթե 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ այդ պարտքը կազմում էր շուրջ 43 մլն դրամ, ապա 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա է ընդամենը 14358.0 դրամի կրեդիտորական պարտք. դեդորայքի՝ 3706.0 դրամ, հողի և գույքահարկ՝ 7303.0 դրամ և էլեկտրաէներգիա՝ 2482.0 դրամ, որն ըստ ժամանակացույցի նախատեսված է մարել մինչև ընթացիկ տարվա մայիս ամիսը:

Մարզի առողջապահական ընկերությունները 2009 թվականի ընթացքում իրականացրել են աշխատավարձի ընթացիկ վճարումներ և պարտքեր չեն գոյացրել:

Առաջնային օղակում աշխատող շուրջ 180 բժիշկներից /մանկաբույժ, քերպակտ/ 126-ն ունեն ընտանեկան բժշկի որակավորում, ընտանեկան բուժքրոջ որակավորում ունեն 119-ը:

Ընտանեկան բժշկության համակարգը ներդրում է առողջության առաջնային պահպանման բոլոր հաստատություններում: Արդյունքում բժշկին ազատ ընտրելու հնարավորություն ընձեռումը զգալիորեն բարելավել է բնակչությանը մատուցվող բուժ.օգնության մատչելիությունն ու որակը: Ըստ նախնական տվյալների ընտանեկան բժշկության համակարգն ավելի նպատակահարմար մոդել է գյուղական բնակավայրերի բուժ հաստատությունների համար:

2009թ. ընթացքում Համաշխարհային Բանկի շուրջ 3.1 մլն ԱՄՆ դոլար վարկային ներդրումով հիմնովին վերանորոգվել և վերազինվել է Հրազդանի բժշկական կենտրոնը:

Կատարվել է Արովյանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքի շուրջ 150 մլն դրամի մասնակի վերանորոգում: Համաշխարհային բանկի վարկային երկրորդ ծրագրով շուրջ 146 մլն դրամ ընդհանուր արժողությամբ վերանորոգման և կառուցման աշխատանքներ են իրականացվել Քասախի, Քանաքեռավանի, Մրգաշենի, Չովունու առողջության առաջնային պահպանման կենտրոններում և Բուժականի բժշկական ամբուլատորիայում:

ՀՀ Առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված գնումներով շուրջ 66 մլն դրամի բժշկական սարքավորումներ է տրամադրվել Արովյանի, Նաիրիի, Չարենցավանի բժշկական կենտրոններին:

Չնայած հաշվետու տարում մարզում աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկման և զանգվածային թունավորման դեպքեր չեն արձանագրվել, սակայն անհանգստացնող է որոշ /սեփական ուժերով ջրամատակարարում իրականացնող/ գյուղական համայնքների ջրամատակարարման համակարգի փճակը, քանի որ գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանական գոտիներ և ջուրը չի վարակազերծվում:

Հաշվետու տարում ՀՀ Կոտայքի մարզի և ԼՂՀ Շահումյանի շրջանի միջև փոխադարձ համագործակցության ծրագրի շրջանակներում մարզի առաջատար բժիշկ-մասնագետների կողմից կազմակերպվել է երկու այցելություն Քարվաճառի բուժմիավորում, որտեղ իրականացվել է Շահումյանի շրջանի բնակչության անվճար բժշկական օգնություն և սպասարկում: Քարվաճառի բուժմիավորմանը հատկացվել են որոշ անհրաժեշտ բժշկական սարքավորումներ, գույք և դեղամիջոցներ: Այցելությունների ընթացքում իրականացվել է ընդհանուր թվով 241 հիվանդների հետազոտություններ: Կազմակերպվել է նաև հիվանդանոցային բուժման կարիք ունեցող անձանց անվճար բուժումը և հղիների ծննդալուծումը մարզի բուժհաստատություններում /20 մարդ/:

***Առողջապահական համակարգի առկա հիմնախնդիրներից են համարվում բժշկական կենտրոնների /բացի Հրազդանից/, պոլիկլինիկաների և մի շարք գյուղական բուժամբուլատորիաների շենքերի հիմնանորոգումն ու կահավորումը:***

***Շտապ բուժօգնության ծառայության ավտոպարկի վերազինում և ժամանակակից սարքավորումներով համայրում, սպասարկող մասնագետների պահանջարկի բավարարում և վերապատրաստում: Նշված հիմնախնդիրները ներառված են Կոտայքի մարզի 2011-2014 թվականների զարգացման ծրագրի նախագծում:***

#### **ԵՐԵՆԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կենտրոնացված հաշվառման տվյալների հիման վրա իրականացվել է մարզի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և վերջիններիս թվին պատկանող անձանց հաշվառումը:

Մարզից կենտրոնացված հաշվառման են վերցված առանց ծնողական խնամքի մնացած 45 երեխաներ և նրանց թվին պատկանող 50 անձ, որոնցից 22-ը հաշվառվել են 2009թ.:

Մարզպետարանի կողմից Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ են տեղափոխվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 15 երեխաներ:

Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում 2009թ. ընթացքում տեղավորվել են 29 երեխաներ:

Մարզպետարանի կողմից տրված եզրակացությունների հիման վրա մանկատուն է տեղավորվել 8 երեխա, որոնց ծնողները հրաժարվել են ծնողական իրավունքներից՝ երեխաների բնածին հիվանդությունների ու արատների, այդ երեխաների խնամքն ու բուժումը իրականացնել չկարողանալու պատճառով: Վեց երեխաներ մանկատնից վերադարձվել են կենսաբանական ընտանիք, հինգ երեխա հաշվառվել են որպես որդեգրման ենթակա, նրանցից երկուսը որդեգրվել են:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թվում են մարզի թվով 654 հաշվառված հաշմանդամ երեխաներ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վկայագրելու համար ստացվել է 48 դիմում, տրվել է 47 վկայագիր, մեկ դիմում մերժվել է:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների շտեմարանում հաշվառվել է 41 իրավախախտ երեխա, հաշվառումից հանվել են 33-ը, այժմ հաշվառված են 28 անչափահասներ, որոնցից 4-ը իրավախախտ աղջիկներ են:

### **ՀՈՂԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

2009թ. օգոստոսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռի համաձայն մարզում առկա են 160.1 հազար հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր, որից շուրջ 96.0 հազ. հա պետական և համայնքային սեփականություն են համարվում:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի ընդունումով ամբողջությամբ ավարտվեցին Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը հարակից համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու աշխատանքները: Փոփոխությունների են ենթարկվել մարզի թվով 42 համայնքների վարչական սահմանները, ամբողջապես լուծվել են ինչպես մարզի համայնքների, այնպես էլ հարակից մարզերի միջև եղած սահմանային բոլոր խնդիրները:

2009թ. ընթացքում մարզի 39 համայնքներում տեղի են ունեցել համայնքային սեփականության հողերի օտարումներ՝ աճուրդային կարգով, որի ընթացքում օտարվել է մոտ 344 հա տարբեր նշանակության հողեր՝ 1 մլրդ 74 մլն. դրամ ընդհանուր արժեքով:

Իսկ 2008թ. ընթացքում օտարվել են շուրջ 1300 հա հողեր՝ 1 մլրդ 350 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Համայնքներում առկա հողային ռեսուրսները հնարավորինս արդյունավետ տնօրինելու նպատակով համայնքների ղեկավարներին առաջարկվել է օտարման ներկայացվող համայնքային սեփականության հողերի մեկնարկային գները սահմանել կադաստրային ամբողջ արժեքի չափից ոչ պակաս: Մրա արդյունքում կտրուկ բարձրացավ 1 քմ գյուղատնտեսական նշանակության հողամասի օտարման արժեքը, որը մարզի համայնքների գերակշիռ մասում հավասարվեց շուկայականին:

Այս քայլի շնորհիվ էր, որ օտարված հողամասերի մակերեսների 4-5 անգամ կրճատման պարագայում ստացվել է գրեթե նույնքան հասույթ, ինչքան նախորդ տարի:

Համայնքներում հողերի աճուրդներից գոյացած միջոցները հիմնականում ուղղվել է համայնքների քաղաքաշինական և հողաշինարարական ծրագրային փաստաթղթերի ստեղծմանը: Ներկայումս մարզի 6 քաղաքային /Հրազդան, Ծաղկաձոր, Արվյան, Չարենցավան, Նոր Հաճըն, Եղվարդ/ և 4 գյուղական /Արտավազ, Հանքավան, Արզական, Ջրվեժ/ համայնքներ ունեն բնակավայրերի գլխավոր հատակագծեր, Նոր Գյուղ և Բալախովիտ համայնքներն ունեն հաստատված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ, իսկ թվով 15 համայնքների համար նշված փաստաթղթերն արդեն պատվիրված են:

Հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի 24 համայնքներում: Ստուգումների արդյունքներով հայտնաբերված տարաբնույթ խախտումների, մասնավորապես՝ հողերի օտարման սահմանված կարգը խախտելու, ապօրինի հողօգտագործումը և հողերի ոչ նպատակային օգտագործումը չկանխելու համար թվով 11 համայնքների ղեկավարներ ենթարկվել են վարչական տույժերի:

Հողերի օտարման գործընթացում համայնքների ղեկավարների կողմից թույլ տրված խախտումների պատճառով մեր կողմից մարզի 17 համայնքներում կասեցվել են թվով 22 աճուրդներ:

Համեմատության համար նշենք, որ 2008թ. ընթացքում մնանատիպ խախտումների համար 48 համայնքներում կասեցվել էին 68 աճուրդներ: Այսինքն՝ տարվա՝ հետևողական աշխատանքի շնորհիվ խախտումներով իրականացվող աճուրդների քանակը մարզում նվազել է շուրջ 3 անգամ:  
**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՈՒՄՆԵՐ**

ՀՈՂԱՏԵՍՔԵՐ	2008	2009	+/-
Գյուղ. նշանակ	1225.4	299.9	-925.5
Բնակավայր.	48.6	21.23	-26.83
հատուկ պահպան.	27.7	9.9	-17.8
արտադրական նշանակ.	-	10.9	+10.9
էներգ. և կոմունալ	-	2.0	+2.0
<b>ընդամենը</b>	<b>1301.7</b>	<b>343.93</b>	<b>-957.7</b>
<b>ընդհանուր արժեք</b>	<b>1 մլրդ 351 մլն</b>	<b>1 մլրդ 74 մլն</b>	<b>-277 մլն</b>

**ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Ներկայումս մարզում գյուղատնտեսությունը վարվում է փոքր գյուղացիական տնտեսությունների միջոցով: Մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1-1.3 հա, գյուղատնտեսական հողատեսքեր. ավելին՝ մեկ տնտեսությանը պատկանող հողատարածքը մասնատված է 3-4 հողակտորի: Ստեղծված իրավիճակը հնարավորություն չի տալիս կիրառել արտադրության արդիական տեխնոլոգիաներ, դժվարություններ են առաջանում արտադրության մեքենայացման, ցանքաշրջանառության կիրառման բնագավառում և հետևանքն այն է, որ արտադրությունն արդյունավետ չի լինում:

Այս իրավիճակից դուրս գալու նախապայմաններից մեկը տնտեսությունների խոշորացումն է և հողատեսքերի կոնսոլիդացիան:

Մարզում նախորդ տարվա համեմատությամբ բարձրացել է վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, որին նպաստել է նաև ՀՀ Կառավարության կողմից 600 հա-ի համար բարձրլեռնային համայնքներին հատկացված սուբսիդիան՝ 466 հա գարնանացանի և 123 հա աշնանացանի աշխատանքներ իրականացնելու նպատակով, բայց և առկա է այն տեսակետը, որ արդյունավետության իմաստով սուբսիդավորումը պետք է կրի շարունակական բնույթ:

2009թ. բերքի տակ կատարվել է 16242 հա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք կամ օգտագործվել է վարելահողերի 43.8 %-ը, որի հիմնական պատճառներից մեկը համարվում է բնակավայրերից հեռու գտնվելու հանգամանքը, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի բարձր ինքնարժեքը:

Գյուղատնտեսության բնագավառի համար խնդրահարույց են համարվում ժամանակակից գյուղտեխնիկա ունենալը, ապահովագրական համակարգի ներդրումը, մարզի որոշ համայնքներում հակակարկտային կայաններ կառուցելու հարցը /ի դեպ համայնքները պատրաստ են կատարել համաֆինանսավորում/:

Տարածա շրջան	հացահատիկ տոննա			կարտոֆիլ տոննա		
	2008	2009	+/-	2008	2009	+/-
Նաիրի	50266.8	4487.4	-539.2	1814.0	1729.5	-84.5
Արմվյան	6881.3	7531.9	+650.6	1109.3	1147.1	+37.8
Հրազդան	7864.8	5887.0	-1977.8	14464	13498	-966
Ընդամենը	19772.7	17906.3	-1866.4	17387.3	16376.4	-1012.7

Տարածա շրջան	բանջար տոննա			պտուղ տոննա		
	2008	2009	+/-	2008	2009	+/-
Նաիրի	7621.3	6023	-1598.3	13468	9814.5	-3653.5
Արմվյան	12784.7	12941.9	+157.2	8013.6	8295.2	+281.6
Հրազդան	9934.7	7845	-2089.7	4876	4440.9	-435.1
Ընդամենը	30340.7	26809.9	-3530.8	26357.6	22550.6	-3807

Տարածա շրջան	խոտ տոննա		
	2008	2009	+/-
Նաիրի	25157	10872	-14285
Արմվյան	15340.5	19808.9	+4468
Հրազդան	29550	35930	+6380
Ընդամենը	70047.5	66610.9	-3436.6

Արտադրված գյուղատնտեսական մթերքների ծավալի 85-90 տոկոսը եղել է ապրանքային և իրացման խնդիր չի առաջացել՝ բացառությամբ կարտոֆիլի և գազարի, որոնց իրացումը ընթանում է որոշակի դժվարություններով:

2009թ. մարզում տեխնիկական գնահատման ծրագրերի շրջանակներում կատարվել են ագրոտեխնիկական նոր տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված մի շարք միջոցառումներ այն է՝  
- գարնանացան սխտորի և տխի սերմնաբուծության կազմակերպում Կոտայք համայնքում  
- բանջարանոցային սոյայի և ձնաուլտի մշակության տեխնոլոգիայի ներդրում Նորգյուղ համայնքում  
- հնդկացորենի մշակություն բարձր լեռնային գոտի համարվող Լեռնանիստ համայնքում

Իհարկե նոր մշակաբույսերը ցանքաշրջանառության մեջ կիրառելու և դրանով իսկ գյուղացուն դրանց մշակման նորագույն տեխնոլոգիաներին ծանոթացնելու առումով այս գործընթացը դրական է, սակայն հարկ էն համարում նշել, որ մնան ծրագրեր իրականացնելիս անհրաժեշտ է համագործակցել տեղական իշխանությունների հետ՝ ծրագրի իրականացման վայրի ճիշտ ընտրության և դրա շնորհիվ ավելի բարձր արդյունք ապահովելու նպատակով:

2009 թվականին կատարվել է 4630 աշնանացանի ցանք, որը նախորդ տարվա համեմատ ավել է 275 հա-ով:

Չնայած ոռոգելի հողատարածքները մարզում 2008թ. համեմատությամբ ավելացել են շուրջ 470 հա-ով, սակայն որպես չլուծված հարց եղել և մնում է ներտնտեսային ցանցերի մաշվածությունը, որի արդյունքում բարձր է ոռոգման ջրի նորմայից մի քանի անգամ ավել կորուստները:

**2009թ. ջրօգտագործողներին մատակարարված ոռոգման ջրի քանակը և զանձված հասույթի գումարը**

ԶՕԸ-երի անվանումը	Մատակարարված ջրի քանակը մլն. խմ		հասույթը մլն. դրամ		զանձվել է վարձավճար մլն. դրամ		զանձման տոկոսը	
	2008	2009	2008	2009	2008	2009	2008	2009
Կոտայք	11,2	7.97	101.0	71.7	85.5	66.6	79.6	92.8
Ջրվեժ- Ձորաղբյուր	4.0	4.45	36.3	35.8	35.0	35.8	96.4	100
Նաիրի	5.9	5.12	47.3	39.9	44.0	38.9	93.1	97.4
Եղվարդ	8.5	5.17	76.9	46.5	58.5	49.0	76	105.3
Գառնի- Գեղարդ	6.2	3.65	38.5	32.8	22.7	23.7	59	72.2
Հրազդան	2.29	1.54	20.7	13.9	12.3	12.3	60	88.4
ԸՆԴԱՄԵՆԸ	38.09	27.9	320.7	240.6	258.5	226.3	78.9	94.0

Մարզի ԶՕԸ-երը 2009 թվականին կատարեցին դրական աշխատանք՝ ապահովելով 94% հավաքագրումներ, բացառությամբ «Գառնի-Գեղարդ» ԶՕԸ-ի, որի գործունեությունն արդյունավետ ու նպատակահարմար չէ:

Մարզի ութ համայնքներում երրորդ կարգի ջրանցքների վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը արդեն ավարտված են և մոտ օրերս կսկսվեն վերակառուցման /վերանորոգման/ աշխատանքները՝ Կոտայք, Ակունք, Նոր Գյուղ, Արզնի, Եղվարդ, Քասախ, Քանաքեռավան և Ջովունի: Վերոհիշյալ համայնքները պատրաստակամ են իրականացնելու 15 տոկոսի չափով ֆինանսավորում:

Ս/թ. փետրվարի 1-ից «Հազարամյանի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան» ծրագրի շրջանակներում, երրորդ կարգի ջրանցքների վերակառուցման նպատակով, սկսվել է իրականացվել հետազոտական աշխատանքներ մարզի 14 համայնքներում:

Ոռոգման համակարգի բարելավմանն ուղղված նոր ծրագրերի իրականացմանն ուղղությամբ որոշակի աշխատանքներ են իրականացվել հազարամյակի մարտահրավեր ծրագրի շրջանակներում: Մարզի չորս համայնքներում կատարվել է ներտնտեսային ոռոգման համակարգի վերակառուցում 23.2 կմ ծավալով:

**Մարզի անասնազոյաքանակը և անասնաբուծական մթերքների արտադրությունը 2008-2009թթ**

	Անվանումը	01.01.2008	01.01.2009	շեղումը +/-
1	խոշոր եղջերավոր անասուններ	56395	52786	3609
	որից կովեր	27677	25569	2108
2	մանր եղջերավոր անասուններ	46587	38486	8101
	որից մայրեր	37448	33001	4447
3	խոզեր	15864	14698	1666
	որից մայրեր	2074	2461	387
4	թռչուններ	1449578	1719256	269678
	այդ թվում առևտրային կազմակերպություններ	1324325	1589745	265420
5	իրացվել է միս կենդանի քաշով /անասուն և թռչուն/ տոննա	15600	13100	-2500
6	արտադրվել է կաթ /տոննա/	68100	59000	-9100
7	արտադրվել է ձու /մլն. հատ/	165.7	184.4	+ 18.7

2009թ. նկատվել է անասնազոյաքանակի նվազում, ինչպես խոշոր, այնպես էլ մանր եղջերավոր անասունների, որը հիմնականում կապված է կերերի կուտակման դժվարությունների հետ հատկապես ընդգծենք արոտավայրերի հեռու գտնվելը բնակավայրերից, կերամիավորի ցածր որակը, կերի կուտակման բարձր ինքնարժեքը:

**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Չնայած վերջին տարիներին բնապահպանական ոլորտի հարցերի վերաբերյալ տեղի ունեցած քննարկումներին և համատեղ իրականացված աշխատանքներին կարելի է փաստել, որ բնագավառում դեռևս դրական լուրջ տեղաշարժեր չեն նկատվում:

Կենսաբազմազանության վրա իր բացասական ազդեցությունն է թողնում ջրային ռեսուրսների անկանոն օգտագործումը և կեղտաջրերով աղտոտումը:

Ջրերի էկոլոգիական պահպանության առաջնահերթ խնդիրներից է մնում կեղտաջրերի մաքրման և հեռացման աշխատանքների կազմակերպումը: Մարզում մաքրման կայանների բացակայության և կոյուղատարների վթարների հետևանքով կեղտաջրերը վերջնականապես հեռացվում են Դալար, Ծաղկաձոր, Մարմարիկ, Հրազդան գետերի միջոցով:

Բազմիցս քննարկվել է մարզի հանգստյան գոտիներում սեպտիկ հորերի տեղադրման միջոցով հանգստյան տներից դուրս եկող կեղտաջրերի մաքրման հարցը, սակայն մինչ օրս այդ ուղղությամբ համապատասխան աշխատանքներ են իրականացրել միայն «Արտուրս», «Աղվերան Հոթել», «Նալ» հանգստյան տները:

Արդիական է Հրազդանի տարածաշրջանում նոր և հզոր մաքրման կայան կառուցելու խնդիրը, դրա հետ մեկտեղ վերականգնելով Հանքավանի և Ծաղկաձորի կոյուղու կոլեկտորները,

որը հնարավորություն կտա տարածաշրջանում վերջնականապես լուծելու ջրային ավազանները կեղտաջրերից զերծ պահելու հարցը:

Մարզը հարուստ է պինդ օգտակար հանքային հանածոներով: Հանքարդյունահանման լիցենզիաներ են տրված թվով 64 հանքավայրերի տեղամասերի համար, որոնցից տարվա ընթացքում շահագործվել են 35-ը, չեն շահագործվել 5-ը, իսկ մնացած 24-ը գտնվում են փաստաթղթային ձևակերպումների փուլում: Այս ոլորտում դեռևս պահպանվում է սովետային շրջանառությունը:

Մարզում բնապահպանական առումով խիստ պրոբլեմատիկ խնդիր է շարունակում մնալ կոշտ թափոնների կառավարման և տեղադրման աշխատանքների կազմակերպումը: Աղբահանությունը և աղբահեռացումը, որպես տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիր, դեռևս հեռու է բավարար լինելուց: Չնայած մեր կողմից մշտապես վերահսկվում է այս գործընթացը, հատկապես ճանապարհամերձ տարածքներում, այդուհանդերձ առանձին հատվածներում դեռևս առկա են տարերային աղբաթափումների երևույթներ և առավել մտահոգիչ է դառնում այն փաստը, երբ այդպիսիք հանդիպում են Երևան-Սևան մայրուղու, Հրազդան-Հանքավան, Երևան-Գառնի-Գեղարդ և Երևան-Գյումրի զբոսաշրջության կենտրոններ տանող այլ ճանապարհամերձ հատվածներում:

Սի շարք համայնքներում /Բյուրեղավան, Նոր Հաճն, Նոր Գեղի և այլն/ խնդիր ունենք աղբավայրերի տեղերի հատկացման հետ, որը լուրջ խոչընդոտ է հանդիսանում աղբահանությունը կանոնակարգված ձևով կազմակերպելու համար, իսկ Բյուրեղավանի ներկայիս գործող աղբավայրի շահագործումը բնապահպանական տեսանկյունից անթույլատրելի է:

Հարկ է նշել, որ Եվրոպական զարգացման և վերակառուցման բանկի կողմից դեռևս 2008թ. սեպտեմբերին կատարված ուսումնասիրությունների արդյունքներով վերջերս հավանության է արժանացել Հրազդանի տարածաշրջանում սանիտարական պոլիգոն/աղբավայր/ կառուցելու գաղափարը, որի նախագծումը ընդգրկվել է բանկի 2010թ. ծրագրում, իսկ կառուցումը նախատեսված է իրականացնել 2011թվականին:

Բնապահպանական տեսանկյունից կարևորվում է նաև մթնոլորտային օդի պահպանությունը: Մարզում մթնոլորտի աղտոտողները հիմնականում հանդիսանում են Հրազդանի ցեմենտի գործարանը, Հրազդանի ՋԷԿ-ը և ասֆալտի գործարանները, որոնց կողմից կատարված ներդրումները առաջին բավարար չեն կտրուկ նվազեցնելու թույլատրելի սահմանային նորմերից ավել կատարվող արտանետումները: Այս ուղղությամբ պատշաճ հսկողություն չի իրականացվում ՀՀ Բնապահպանական պետական տեսչության և նրա տարածքային բաժնի կողմից հատկապես ասֆալտի գործարանների նկատմամբ, որոնց կողմից չեն օգտագործվում ֆիլտրող սարքավորումներ. ընդգծենք, որ այստեղ նույնիսկ չենք էլ անդրադառնում դրանց վերազինման խնդիրներին /Հրազդանի, Կոտայքի ճանապարհաշինական ձեռնարկություններ և «Ճանապարհ» ՍՊԸ/:

Վերջին երկու տարիների ընթացքում բնապահպանական տեսչության տարածքային բաժինը ասֆալտի գործարանների կողմից մթնոլորտում փոշու պարունակության սահմանային թույլատրելի նորմաների գերազանցման դեպք չի արձանագրել, թեպես այդ ուղղությամբ իրականացվել են լաբորատոր դիտարկումներ:

Մթնոլորտային օդի պահպանության գործում հսկայական դեր և նշանակություն ունի կանաչ տարածքների առկայությունը: Այս տեսանկյունից կարևորվում է մարզի անտառային գոտիներում բավարար չափով անտառների տնկման, խնամքի, լրացման աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև ապօրինի հատումների կանխումը: Դիշտ է ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, վերջին տարիներին նվազել են ապօրինի անտառահատումների դեպքերը, օրինակ՝ 2006-ին՝ 13, 2009թ.- 7, սակայն չեն ավելացել անտառվերականգնման աշխատանքները: Այս առումով այն պետք է դառնա պետական հոգածության առարկա:

Անհրաժեշտ պահանջկոտություն պետք է դրսևորվի անտառային տարածքները հանգստի կազմակերպման նպատակներով վարձակալողների նկատմամբ:

### **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՆ**

2009 թվականին մարզում զգալի աշխատանք է տարվել քաղաքաշինության բնագավառում ՀՀ Կառավարության տարածքային քաղաքականության իրականացման՝ դպրոցների վերանորոգման աշխատանքների կազմակերպման, համայնքների ղեկավարների քաղաքաշինական գործունեության վերահսկման, ինքնակամ շինարարության հայտնաբերման և կասեցման ուղղությամբ:

Քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է 30 օբյեկտների կառուցում և հիմնանորոգում՝ 1 մլրդ 566.1 մլն.դրամ ընդհանուր գումարով:



Կոտայքի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել է կրթական 14 օբյեկտների հիմնանորոգում՝ 606.8 մլն.դրամ ընդհանուր գումարով:

**ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ**

Հ/Հ	ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՔԱՆԱԿ	ԳՈՒՄԱՐՆԵՐ մլն. դրամ
1.	<b>Քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ</b>		
	<i>կրթական օբյեկտներ</i>		
	-հիմնանորոգում	22	1201.3
	-շինարարություն	3	240.0
2.	<b>Մարզպետարանի պատվիրատվությամբ</b>		
	<i>կրթական օբյեկտներ</i>		
	-հիմնանորոգում	14	606.8
	<b>ԸՆԴԱՍԵՆԸ</b>	<b>39</b>	<b>2173.0</b>

Տարվա ընթացքում վերահսկվել է Երևան-Գյումրի և Երևան-Սևան միջպետական նշանակության ավտոճանապարհներին հարող տարածքների կառուցապատման ընթացքը:

Երևան-Գյումրի միջպետական նշանակության ավտոճանապարհին հարող տարածքներում արձանագրված՝ նախկինում կառուցված 42 ինքնակամ շինություններից 36-ը կարգավորված է ամբողջությամբ, 5-ի գործերը ներկայացվել է մարզային դատախազություն: Չկարգավորված մեկ օբյեկտը պատկանում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝ գետնանցում Պոռչյան համայնքի հատվածում:

Երևան-Սևան միջպետական ավտոճանապարհին հարող տարածքներում արձանագրված 45 ինքնակամ շինություններից 42-ը կարգավորված է ամբողջությամբ, իսկ չկարգավորված 3 օբյեկտներից մեկը պատկանում է ՀՀ պաշտպանության նախարարությանը /Երևան-Սևան ավտոմայրուղու վրա գտնվող Արծվի հուշարձանին հարող ջրավազանին կից բակեր/, երկուսը՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը, որոնց կարգավորման հարցով առաջարկություններ են ուղարկվել համապատասխան նախարարություններ:

Իրականացված պլանային և ըստ անհրաժեշտության ստուգումների արդյունքներով հայտնաբերվել են առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացվող շինարարության 64 օբյեկտներ, որն ամբողջությամբ չի արտացոլում իրական պատկերը. բոլորի վերաբերյալ պարտադիր կատարման ցուցումներ են տրվել համայնքների ղեկավարներին՝ դադարեցնելու շինարարական աշխատանքները, մինչև համապատասխան փաստաթղթերի ձեռքբերումը: Մեկ օբյեկտի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել դատախազություն:

Հարկ է նշել, որ հատկապես խոշոր համայնքներում լուրջ վերահսկողություն չի իրականացվում շինարարության ընթացքի, կառուցվող օբյեկտների համապատասխանությանը շինարարական նորմերին ու դեռևս բազմաթիվ են ապօրինի շինարարության դեպքերը:

Մարզպետարանը ամբողջովին գույքագրել է համայնքների վարչական տարածքներում ապօրինի կառուցված օբյեկտները և ակնկալում է 2010 թվականի ընթացքում դրանց համապատասխանեցումը օրենսդրության պահանջներին:

**ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

Կոտայքի մարզում ջրամատակարարումը իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից՝ 24, «Երևան-ջուր» ՓԲԸ-ի՝ 20 և սեփական ուժերով՝ 23 համայնքներում:

Ընդհանուր առմամբ ջրամատակարարման միջին տևողությունը մարզում կազմում է շուրջ 11 ժամ:

Ջրաչափման համակարգի առկայության առումով ամենաբարձր ցուցանիշը «Երևան ջուր» ՓԲԸ-ի սպասարկման գոտու բնակավայրերում է՝ 94.5 %, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման գոտու բնակավայրերում՝ 82.0 %, իսկ համայնքների կողմից սպասարկվող բնակավայրերում ընդհանրապես ջրաչափական համակարգը բացակայում է:



Մարզպետարանի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա 2009 թվականին Համաշխարհային բանկի վարկային ծրագրի միջոցներով աշխատանքներ սկսվեցին Հրազդան քաղաքի ջրամատակարարման բարելավման ուղղությամբ, որի համար նախատեսված է 5.8 մլն. ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ: «Հայջրնուդկոյուդի» ՓԲԸ-ի կողմից կենտրոնական պոմպակայանի վերականգնման նպատակով նախատեսվել է ևս 693 մլն դրամ: 2009 թվականին իրականացվել են 146 մլն դրամի նախագծային և հետազոտական աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի վարկային ծրագրով 2009 թվականին մարզի Աբովյան, Քաղսի, Քարաշամբ, Չարենցավան, Սուլակ և Արզել համայնքներում իրականացվել են 145 մլն դրամի աշխատանքներ:

Պետ.բյուջեից հատկացված 30.0 մլն. դրամ սուբվենցիայով Կապուտան համայնքում նախագծվեց և կառուցվեց նոր ջրամատակարարման համակարգ, որի շնորհիվ համայնքի շուրջ 150 ընտանիքներ ստացան խմելու ջուր:

Մարզի համայնքների սեփական միջոցներով ջրային տնտեսության բնագավառում իրականացվել են 92.8 մլն. դրամի շինվերանորոգման աշխատանքներ:

Չնայած կատարված աշխատանքներին՝ ջրամատակարարման համակարգում կան լուրջ հիմնախնդիրներ, որոնք շուտափույթ լուծման կարիք ունեն.

- Հրազդան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վերակառուցում և վերականգնում, որի իրականացման համար բացի նախատեսված գումարներից անհրաժեշտ կլինի շուրջ 9 մլն ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ:

- Գլխամասային կառույցների անվտանգության և սանիտարական գոտիների ապահովում:

- Կոյուղու մաքրման կայանների կառուցում:

- Բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի վերականգնում:

- Սեփական ուժերով սպասարկում իրականացնող համայնքներում մասնագիտացված կառույցների ստեղծում կամ սպասարկման հանձնումը մասնագիտացված կազմակերպություններին:

<b>Խմելու ջուր</b>	Համաշխ. բանկ	Հրազդան	380.0 հազար \$
	2010թ. ներդրումներ	արտաքին ցանց	5.8 մլն \$
		պոմպակայան	1.5 մլն \$
	Ասիական բանկ	Աբովյան Քաղսի Քարաշամբ Չարենցավան Սուլակ Արզել	1.834.0 մլն \$
պետ. բյուջե	Կապուտան	30.0 մլն դրամ	

**ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ**

Տրանսպորտի բնագավառում մարզպետարանը կազմակերպում է ներմարզային երթուղիներով ուղևորափոխադրումները:

Ընդհանուր առմամբ մարզում գործում են 42 ներմարզային, 25 միջմարզային և 6 ներհամայնքային երթուղիներ:

Տարվա ընթացքում տեղի ունեցած տրանսպորտային միջոցների համալրումների, փոփոխությունների և կայացած մրցույթի արդյունքներով զգալիորեն բարելավվել է շահագործման ընդունված ավտոբուսների տեխնիկական վիճակը, տեղի է ունեցել շարժակազմի տարիքային

թարմացումներ, ինչպես նաև կազմակերպությունների մոտ բարձրացել է սեփականության տոկոսը:

Մարզպետարանը մշտապես առաջնորդվել է կանոնավոր փոխադրումների մրցույթների կարգի պահանջներով, մարզային մրցութային հանձնաժողովներում ընդգրկվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ու ՀՀ ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչները: Դրան հակառակ մարզի հետ կապված միջմարզային երթուղիների մրցույթներին մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցությունը հանվել է լիազոր մարմնի կողմից՝ փոփոխելով մրցութային կարգը, իսկ միջմարզային երթուղիների ցանկը չի նախատեսվում համաձայնեցնել մարզպետի հետ, ինչը չի բխում ուղևորափոխադրումների արդյունավետության շահերից:

Հարկ է նշել, որ գործունեության ամբողջ ընթացքում ՀՀ տրանսպորտային տեսչության կողմից մարզպետարանին տեղեկություններ չեն տրամադրվել ուղևորափոխադրումների կարգի խախտումների վերաբերյալ, այն դեպքում, երբ կարգով որոշ խախտումների համար նախատեսվում են երթուղու սպասարկման իրավունքից զրկելու դեպքեր:

Մարզի ավտոմոբիլային ճանապարհների ցանցում ընդգրկված են 48.9 կմ միջպետական, 298.7 կմ հանրապետական, 264.8 կմ տեղական նշանակության ճանապարհներ:

ՀՀ Կառավարության որոշմամբ տեղական ճանապարհներից 140 կմ ընդգրկվել է հանրապետական նշանակության ավտոճանապարհների անվանացանկում և որպես պետական կառավարման մարմին սահմանվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, սակայն առ այսօր այդ ճանապարհահատվածների պահպանության և շահագործման աշխատանքները իրականացվում են մարզպետարանի կողմից:

Մարզային ճանապարհների պահպանության ու շահագործման նպատակով 2009 թ. պետական բյուջեից հատկացվել է 82.8 մլն. դրամ, որը սակայն ամբողջությամբ չի օգտագործվել կապալառուների կողմից ժամանակին և նախատեսված ծավալներով աշխատանքները չկատարելու, ինչպես նաև ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված մեթոդական ցուցումներով այլ աշխատանքներ իրականացնելու հնարավորություն չնախատեսելու հետևանքով: Մեր կողմից պատրաստվել է առաջարկություն մեթոդական ցուցումներում արմատական փոփոխություններ կատարելու վերաբերյալ, ինչը կնպաստի ավտոճանապարհների ամբողջ համալիրի շահագործման ընդգրկվածությանը և հատկացվող գումարների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը:

2009թ.ին մարզում տարբեր ծրագրերով սկսվել են շուրջ 70 կմ ավտոճանապարհների նորոգման աշխատանքներ, որտեղ հիմնական բաժինը կազմում են Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը:

**Հարկ են համարում նշել, որ մարզում իրականացվող ճանապարհաշինական ծրագրերի քննարկմանը նախագծային և աշխատանքների իրականացման փուլերում մարզպետարանն ընդհանրապես չի ընդգրկվում, որի հետևանքով որոշ ծրագրերում հաշվի չեն առնվել աշխատանքների նպատակահարմարությունները: Երբեմն կատարված ներդրումները ոչ ամբողջությամբ են արդարացված: Օրինակ՝ Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ նորոգվում է Ջրատատ-Մեղրաձոր-Հանքավան 32 կմ երկարություն ունեցող ավտոճանապարհի միայն վերջին հատվածը, որտեղ երթևեկության ինտենսիվությունը շատ քիչ է: 2010 թվականին ամաշխարհային բանկի ֆինանսավորմամբ նախատեսվում է նորոգել Քաղսի-Հրազդան ճանապարհը մինչև քաղաքի մուտքը այն դեպքում, երբ այդ ճանապարհին առկա են ոչ պակաս քայքայված հատվածներ մնացած մասերում:**

**Մեր կողմից կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ նորոգվող օբյեկտներում առկա են շեղումներ շիննորմերից և նախագծերից, տեղ են գտել տեխնոլոգիական խախտումներ և անորակ աշխատանքների դեպքեր /Բյուրեղավան-Նուռնուս ճանապարհահատված/:**

Կարևորում են նաև Երևան-Սևան մայրուղուց դեպի Աղվերանի և Հրազդանից դեպի Հանքավան հանգստյան գոտիներ տանող ճանապարհահատվածների հիմնանորոգումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ գոտիներում նկատվում են ներդրումների ակտիվացման միտումներ. այդ ամենն առավել ցայտուն կնկատվի Չրամբարի գործարկումից հետո:

#### ՃԱՆԱՊԱՐՀԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ		2009 մլն. դրամ	2009 կմ
1	<i>Պետ. բյուջե</i>		

	նորոգում	100.0	
	պահպանում	540 / 69.6	
2	<b>Ասիական քանկ</b>	-	<b>63.6</b>
	Աբովյան-Նուռնուս	-	9.85
	Մայակովսկի-Չորաղբյուր	-	9.37
	Փյունիկ-Հանքավան	-	13.06
	Չորավան-Արագյուղ	-	6.0
	Երևան-Եղվարդ	-	8.0
	Չովունի-Մրգաշեն	-	8.48
	Բուժական-Սարալանջ	-	8.9
3	<b>Համաշխարհային քանկ</b>	-	<b>3</b>
	Ջրվեժ-Գառնի	-	3

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ**

Հաշվետու տարվա ընթացքում մարզային ու հանրապետական լրատվամիջոցներով, ինչպես նաև պաշտոնական ինտերնետային կայքում լուսաբանվել են մարզպետարանի աշխատանքային ծրագրով նախատեսված հիմնական միջոցառումներն ու նախաձեռնությունները, այդ թվում՝ մարզպետի մոտ կայացող քննարկումներ, տարածաշրջանային խորհրդակցություններ, մարզի խորհրդի նիստեր, քաղաքացիների ընդունելություններ, այցելություններ համայնքներ, կրթական ու առողջապահական հաստատություններ, արտադրական ձեռնարկություններ, մշակութային ու մարզական միջոցառումներ և այլն:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կողմից մշակված մեթոդաբանության համաձայն լուսաբանվել են տարվա ընթացքում տեղի ունեցած բոլոր մարզխորհրդի նիստերը:

Մայիս ամսվա հերթական նիստում քննարկվել է «Մարզի համայնքներում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների կիրառման մասին» հարցը, որին հրավիրվել ու իր դիտարկումներն է ներկայացրել նաև «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահը:

Տարվա ընթացքում, ըստ նախապես հաստատված ժամանակացույցի, կազմակերպվել է համայնքների ղեկավարների կողմից հանրությանը ներկայացվող հաշվետվությունների գործընթացը:

Մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվել են մարզպետի բոլոր որոշումներն ու կարգադրությունները: Կայքի տեխնիկական ու ծրագրային հնարավորությունների սահմաններում տեղադրվել են նաև համայնքների ղեկավարների ու ավագանու որոշումները:

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ, ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ԿԱԴՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

2009թ. ընթացքում մարզպետարանում ստացվել է 9010 փաստաթուղթ նախորդ տարվա 7376 դիմաց կամ 1634-ով ավել, իսկ դիմումների թիվը կազմել է 1031՝ կամ նախորդ տարվա նախորդ տարվա համեմատ նվազել է ավելի քան երկու անգամ:

Մարզպետի մոտ կազմակերպված ընդունելություններին մասնակցել են 408 քաղաքացիներ՝ նախորդ տարվա 267-ի փոխարեն:

Մարզպետարանի գործունեության արդիականացման աշխատանքի նոր ձևերի կիրառման շրջանակներում Կոտայքը հանրապետության մարզերից առաջինն է անցել գործավարության փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային տարբերակին, որն իրականացվում է միասնական «MULBERRY» համակարգչային ծրագրով, ինչը հնարավորություն է տալիս ավելի օպերատիվ կազմակերպել թղթաշրջանառությունը պետական մարմինների և քաղաքացիների հետ:

Մարզպետարանում 2009 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ աշխատում են 130 աշխատակիցներ, որից 111-ը քաղաքացիական ծառայողներ:

Հաշվետու տարում դասային աստիճան է շնորհվել 10, առավելագույն դասային աստիճան՝ 14 քաղաքացիական ծառայողների: Ատեստավորվել են 41, վերապատրաստվել են 38, խրախուսվել են 25, կարգապահական տույժի են ենթարկվել 7 քաղաքացիական ծառայողներ:



**ՄԱՐԶՊԵՏ**

**Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**